ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ 25-ՐԴ ՀԱՄԱՐԻ ԱՌԹԻՎ

«Գիտական Արցախ»-ի հարգելի՛ հեղինակներ, ընթերցողներ և գործընկերներ,

Սույն համարի հրատարակումը մեր խմբագրակազմի համար խորհրդանշական է. լույս է տեսնում **«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականի հոբելյանական 25-րդ համարը**, ինչը կարևոր ձեռքբերում է ոչ միայն խմբագրակազմի, այլև գիտական համայնքի համար:

2018 թ.-ից մինչև օրս տպագրված 25 թողարկումներն արդեն իրողություն են. դրանցում արտացոլված է ոչ միայն մեր խմբագրության աշխատանքը, այլև այն գիտական ու մտավոր ներուժը, որն ունի Արցախը և Մայր Հայաստանը:

Այս տարիների ընթացքում Պարբերականը դարձավ հարթակ գիտական մտքի զարգացման, փորձի փոխանակման և նոր գաղափարների ներկայացման համար: Յուրաքանչյուր հրապարակված հոդված՝ լինի դա պատմության, լեզվաբանության, մշակույթի, իրավագիտության կամ քաղաքագիտության մասին, մի նոր քայլ է դեպի գիտելիքի հարստացում և ազգային ինքնության ամրապնդում:

Հոբելյանական այս համարի լույսընծայումը ևս մեկ անգամ փաստում է, որ մեր ընտրած ճանապարհը ճիշտ է, աշխատանքի արդյունքը՝ կարևոր ու տեսանելի: Մենք հավատում ենք, որ գիտությունը և կրթությունը ոչ միայն պահպանում են ժողովուրդների հիշողությունն ու արժեքները, այլև բացում են ապագայի դռները: Սույն համարի թողարկումը խորհրդանշում է նաև մեր ձգտումը՝ շարունակաբար պահպանելու բարձր գիտական չափանիշները, խրախուսելու հետազոտողներին և նպաստելու գիտության ու կրթության զարգացմանը:

Պարբերականի գործունեության ընթացքում բազմաթիվ հոդվածագիրներ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, մի շարք հեղինակների շնորհվել է դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչումներ. սա էլ ավելի է բարձրացրել Գիտական Արցախի հեղինակությունը, իսկ խմբագրակազմն ավելի է խստացրել գիտական հոդվածներին ներկայացվող որակական պահանջները:

Շնորհակալություն եմ հայտնում բոլոր հեղինակներին, խմբագրական խորհրդի անդամներին, գրախոսներին, ընթերցողներին և մեկենասներին, որոնց մասնակցությամբ և աջակցությամբ հնարավոր դարձավ անցնել այս դժվար, բայց միաժամանակ պատվաբեր ուղին: Հոբելյանական 25-րդ համարը ոչ միայն անցած ուղու արձանագրումն է, այլև նոր սկիզբ՝ նոր նպատակներով, եռանդով ու պատասխանատվությամբ: Մենք հավատում ենք, որ գիտելիքը մեր հասարակության ամենահուսալի հենասյունն է, իսկ «Գիտական Արցախ»-ը մնալու է այդ հենասյան մի մասնիկը՝ շարունակելով ծառայել գիտությանը, կրթությանը, Արցախին ու Մայր Հայաստանին:

Նշեմ, որ **«Գիտական Արցախ»** եռալեզու պարբերականը (www.scientificartsakh.com) Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) առանցքային նախագծերից մեկն է, որը հիմնադրել ենք 2018 թ.-ին *(ի դեպ, 1-ին համարը տպագրելուց հետո քչերն էին հավատում «Գիտական Արցախ»-ի հաջողությանը, ինչն այսօր անհերքելի փաստ է)*: Պարբերականի հիմնադիրը Երևանի պետական համալսարանն է, իսկ նախաձեռնողն ու հրատարակիչը՝ ԱԵԳՄՄ-ն:

Պարբերականը 2019 թ.-ից ընդգրկված է **ՀՀ ԲՈԿ-ի** (ներկայումս՝ ԲԿԳԿ) կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների» ցանկում, իսկ 2023 թ. ընդգրկվեց **РИНЦ** (Российский индекс научного цитирования) միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում (www.elibrary.ru), որտեղ ներկայացված են սակավաթիվ հայկական գիտական պարբերականներ:

2025 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ հրապարակվել է «Գիտական Արցախ» պարբերականի **25 համար**: Դրանցում ընդհանուր առմամբ տպագրվել են **733 հեղինակների 636 հոդվածներ**, որոնք ներկայացնում են աշխարհի 19 երկրները՝ Հայաստանը, Արցախը, Արաբական Միացյալ Էմիրությունները, ԱՄՆ-ը, Բելառուսը, Գերմանիան, Դոնեցկի Ժողովրդական Հանրապետությունը, Եգիպտոսը, Իսրայելը, Իրանը, Լեհաստանը, Լիբանանը, Հարավային Օսեթիան, Ղազախստանը, Շվեյցարիան, Չինաստանը, Ռուսաստանը, Վրաստանը և Ուկրաինան:

Ի դեպ, «Գիտական Արցախ»-ն Արցախյան միակ պարբերականն է, որը շարունակում է տպագրվել 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո, երբ էթնիկ զտման ու ցեղասպանության սպառնալիքի տակ արցախահայությունը բռնի տեղահանվեց Մայր Հայաստան:

Արցախի ապօրինի և ժամանակավոր բռնազավթման, ինչպես նաև արցախահայության բռնի տեղահանման հետևանքով Արցախի երիտասարդ գիտնականներն ու մասնագետները ստանձնել են առավել պատասխանատու դեր՝ գիտական ուժերի համախմբման, գիտակրթական նախաձեռնությունների առաջմղման և Արցախի հիմնախնդրի գիտական ուսումնասիրության ու ներկայացման գործում: Այսօր Կազմակերպությունն իր ջանքերն ուղղում է նաև արցախագիտության պահպանման, զարգացման և լայն հանրության շրջանում տարածման կարևոր առաքելությանը՝ օգտագործելով նաև «Գիտական Արցախ»-ի հնարավորությունները:

ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԵԳՄՄ-ի հիմնադիր,
«Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր,
Արցախի էլեկտրոնային գրադարանի նախաձեռնող և համակարգող,
փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ